

ՀՀ ԳԱԱ «ՀԱՅԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ» ԳԱԿ ՊՈԱԿ

Սարգսյան Տաթևիկ Հովհաննեսի

ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՏԵՂԱԿԱԼՎԱԾ ՈՉ ՍՊԻՏԱԿՈՒՑԱՅԻՆ
α-ԱՄԻՆԱԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԴԻ- ԵՎ ՏՐԻՊԵՊՏԻԴՆԵՐԻ
ՍԻՆԹԵԶԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՐԻՆԱՅԻՆ
ՊՐՈՏԵԱԶՆԵՐԻ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ԿՐՎ

Գ.00.14 - «Կենսատեխնոլոգիա» և
Բ.00.10 - «Կենսօրգանական քիմիա» մասնագիտություններով
քիմիական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՄԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2012

НПЦ «АРМБИОТЕХНОЛОГИЯ» НАН РА ГНКО

Саргсян Татевик Оганнесовна

СИНТЕЗ ДИ- И ТРИПЕПТИДОВ, СОДЕРЖАЩИХ ФУНКЦИОНАЛЬНО-
ЗАМЕЩЕННЫЕ НЕБЕЛКОВЫЕ α-АМИНОКИСЛОТЫ И ИХ ВЛИЯНИЕ НА
АКТИВНОСТЬ СЕРИНОВЫХ ПРОТЕАЗ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени
кандидата химических наук по специальностям

03.00.14 – «Биотехнология» и

02.00.10 – «Биоорганическая химия»

Ереван – 2012

Ատենախոսության թեման հաստատվել է «Կենսատեխնոլոգիայի ԳՀԻ» ՓԲԸ (ներկայումս ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա») ԳԱԿ և ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդներում:

Գիտական ղեկավարներ՝

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պրոֆեսոր
Ս. Ս. Մաղյան
ք.գ.թ. Յու. Մ. Դանդան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

ք.գ.դ. Ա.Ե. Աղաջանյան
ք.գ.դ. Վ.Ս. Հարությունյան

Առաջատար կազմակերպություն՝

ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական
քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն

Պաշտպանությունը կայանալու է 2012 թ. հուլիսի 20-ին, ժամը 14⁰⁰-ին
ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ում գործող ԲՈՒՀ-ի Կենսատեխնոլոգիայի
018 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0056, ՀՀ, ք. Երևան, Գյուրջյան փողոց, 14, հեռ/ֆաքս (374 10) 65 41 83:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա»
ԳԱԿ-ի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2012 թ. հունիսի 20-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, կ.գ.թ.,՝

Գ.Ե. Ավետիսովա

Тема диссертации утверждена на заседаниях ученых советов ЗАО «НИИ Биотехнологии» (ныне НПЦ «Армбиотехнология» НАН РА) и химического факультета ЕГУ.

Научные руководители:

академик НАН РА, профессор
А.С. Сагиян

к.х.н. Ю.М. Дангян

Официальные оппоненты:

д.х.н. А.Е. Агаджанян

д.х.н. В.С. Арутюнян

Ведущая организация:

Научно-технологический центр органической и
фармацевтической химии НАН РА

Защита диссертации состоится «20» июля 2012 г. в 14⁰⁰ часов на заседании
специализированного совета ВАК-а 018 Биотехнологии при НПЦ
«Армбиотехнология» НАН РА.

Адрес: 0056, РА, г. Ереван, ул. Гюрджяна, 14, тел/факс (374 10) 65 41 83.

С диссертацией можно ознакомиться в библиотеке НПЦ «Армбиотехнология»
НАН РА.

Автореферат разослан «20» июня 2012 г.

Ученый секретарь специализированного совета, к.б.н.

Г.Е. Аветисова

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Խնդրի արդիականությունը: Կենսաբանորեն և դեղաբանորեն ակտիվ քիրալային օրգանական միացությունների սինթեզը համարվում է ժամանակակից կենսատեխնոլոգիայի և կենսաօրգանական քիմիայի կարևորագույն ուղղություններից մեկը: Նման միացությունների շարքին են պատկանում բնական պեպտիդները և նրանց սինթետիկ նմանակները, որոնք՝ շնորհիվ կառուցվածքային յուրահատկությունների և կենսաբանական հատկությունների, այսօր անփոխարինելի տեղ են զբաղեցնում բժշկության, դեղագործության, գիտության ու տեխնիկայի այլ ոլորտներում, որոնց ստացումն ու հետազոտումը հիմնարար և կիրառական մեծ հետաքրքրություն է ներկայացնում: (Norbert Sewald and Hans-Dieter Jakubke. 2009):

Պեպտիդները՝ շնորհիվ կառուցվածքային առանձնահատկությունների, օժտված են սպիտակուցների և բջջային այլ մակրոմոլեկուլների հետ փոխազդելու պոտենցիալ ունակությամբ: Դրանք որոշ ֆերմենտների (պրոտեազների, կինազների, ֆոսֆոլիպազների, տրանսֆերազների և այլն) կարևոր սուբստրատներ են, իսկ նրանց նմանակները հաջողությամբ կիրառվում են տարբեր մետաբոլիկ պրոցեսների մեխանիզմների հետազոտման գործընթացներում՝ որպես ֆերմենտների արգելակիչներ (Weidner, J. R., Dunn, B. M. 1991):

Կենսաբանորեն ակտիվ բնական պեպտիդները հաջողությամբ կիրառվում են նաև բժշկագիտության բնագավառում, որպես դեղապատրաստուկներ: Ժամանակակից դեղագործության արդիական խնդիրներից է օրգանիզմի համար օտարածին պեպտիդային կառուցվածքի դեղապատրաստուկների ստացումը: Բնական պեպտիդի կառուցվածքում սպիտակուցային ամինաթթվի փոխարինումը նրա ոչ սպիտակուցային նմանակով բերում է դեղի ազդեցության պրոլոնգացմանը և արդյունավետության մեծացմանը: (Rivier, J., Brown, M., 1976, Затевахин И.И., Шегалов 2000):

Չնայած այն հանգամանքին, որ այսօր երկար պեպտիդները հիմնականում սինթեզվում են պոլիմերային հենքի վրա, ոչ սպիտակուցային ամինաթթուներ պարունակող նոր պեպտիդների սինթեզը նպատակահարմար է իրականացնել դասական պեպտիդային սինթեզի մեթոդներով, քանի որ այս դեպքում կարևոր է միջանկյալ արգասիքների անջատումը և ուսումնասիրումը, ինչը դժվար է իրականացնել պոլիմերային հենքի վրա մատրիցային սինթեզի ժամանակ: (M. G. Dutta 2011):

Պեպտիդային սինթեզի հայտնի եղանակների շարքում կարելի է առանձնացնել ակտիվացված էսթերների մեթոդը, որը ապահովում է սինթեզի համեմատաբար բարձր ելքեր և որի դեպքում նպատակային արգասիքի ոչ ցանկալի ռացեմիզացման վտանգը նվազագույն է:

Բնական պեպտիդների և նրանց սինթետիկ նմանակների կենսաբանական հատկությունների ուսումնասիրությունը համարվում է դժվար և բազմաձևավա աշխատանք, քանի որ պեպտիդների ազդեցությանը ենթակա քիրալները բազմաթիվ են: Դրանց շարքին են պատկանում պրոտեոլիտիկ ֆերմենտները, որոնց ազդեցության խանգարումը օրգանիզմում հարուցում է ախտածին երևույթներ: (Rinderknrecht, H. 1993):

Հետևաբար, ակտիվացված էսթերների կիրառմամբ ոչ սպիտակուցային ամինաթթուներ պարունակող պեպտիդների սինթեզը և պրոտեազների վրա նրանց ազդեցության հետազոտումը արդիական խնդիր է:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսական աշխատանքի նպատակն է տարբեր կառուցվածքի ալիֆատիկ, արոմատիկ և հետերոցիկլիկ տեղակալիչներով էնանտիոմերապես մաքուր ոչ սպիտակուցային ամինաթթուներից կազմված նոր պեպտիդների սինթեզի մեթոդների մշակումը, նմուշների ստացումը և սերինային պրոտեազների ակտիվության վրա նրանց ազդեցության հետազոտումը:

Արդյունքների մեկնաբանությունը առավել բովանդակալից դարձնելու համար նպատակ է դրվել մոլեկուլային մակարդակով ուսումնասիրել լիզանոնների (ոչ սպիտակուցային ամինաթթուներից կազմված պեպտիդների) հետ ֆերմենտների փոխազդեցության հնարավոր տարբերակները համակարգչային ծրագրերի (դոքինգ անալիզ) կիրառմամբ:

Վերոնշյալ նպատակին հասնելու համար պլանավորվել է հետևյալ հիմնական խնդիրների լուծումը,

- մշակել քենոտակտիկ N-ֆորմիլմեթիոնիլ պեպտիդների սինթեզի եղանակ,
- մշակել տարբեր կառուցվածքի ալիֆատիկ, արոմատիկ և հետերոցիկլիկ տեղակալիչներով ոչ սպիտակուցային (S)- և (R)- α -ամինաթթուներ պարունակող N-ֆորմիլմեթիոնիլ դի- և տրիպեպտիդների սինթեզի մեթոդներ,
- մշակել ալիֆատիկ և հետերոցիկլիկ տեղակալված ոչ սպիտակուցային ամինաթթուներ պարունակող նոր դի- և տրիպեպտիդների սինթեզի մեթոդներ՝ BOC պաշտպանիչ խմբի կիրառմամբ,
- համակարգչային AutoGrid 4 և AutoDock 4 ծրագրերի կիրառմամբ սինթեզված հետերոցիկլիկ տեղակալված դի- և տրիպեպտիդների շարքում բացահայտել ցլի լյարդի տրիպսինի և *Tritirachium album* Limber սնկից անջատված պրոտեինազ K-ի պոտենցիալ արգելակիչները,
- ուսումնասիրել սինթեզված հետերոցիկլիկ տեղակալիչներով α -ամինաթթուներից կազմված նոր դի- և տրիպեպտիդների ազդեցությունը ցլի լյարդի տրիպսինի և *T. album*-ի պրոտեինազ K-ի ակտիվության վրա:

Աշխատանքի գիտական նորույթը: Ակտիվացված էսթերների մեթոդի կիրառմամբ մշակվել են N-ֆորմիլ-(S)-մեթիոնինի և N-տրեոթրեոթրապիլարբոնիլ-(S)-ալանինի հենքի վրա կառուցված էնանտիոմերապես մաքուր ոչ սպիտակուցային ամինաթթուներ պարունակող դի- և տրիպեպտիդների սինթեզի մեթոդներ: Յուրյ է տրվել, որ ամինաթթուների կոդոնսման ռեակցիաները հիմնականում ընթանում են համենատարբար արագ և ռացեմիզացիայի բացակայությամբ:

Սինթեզվել են գրականության մեջ չնկարագրված տարբեր ալիֆատիկ, արոմատիկ և հետերոցիկլիկ տեղակալիչներով էնանտիոմերապես մաքուր (S)- և (R)- α -ամինաթթուներ պարունակող ավելի քան 34 նոր դի- և տրիպեպտիդներ, որոնց կառուցվածքը և կոնֆիգուրացիան պարզաբանվել է ժամանակակից ֆիզիկաքիմիական անալիզի մեթոդներով:

Առաջին անգամ հետազոտվել է 1,2,4-տրիազոլային օղակ պարունակող ամինաթթուների և նրանցից կազմված պեպտիդների ազդեցությունը ցլի լյարդի

տրիպսինի և T. album-ի պրոտեինազ K-ի ակտիվության վրա: Յույց է տրվել, որ այդ միացությունները ոչ միայն ճնշում, այլ նաև կարող են խթանել ֆերմենտների ակտիվությունը:

Աշխատանքի կիրառական նշանակությունը: Մշակվել է պոտենցիալ քեմոտակտիկ ակտիվությամբ օժտված N-ֆորմիլմեթիոնիլ պեպտիդների սինթեզի մատչելի մեթոդ, որի կիրառմամբ սինթեզվել են ավելի քան 25 դի- և տրի-պեպտիդներ՝ գանազան ալիֆատիկ, արոմատիկ և հետերոցիկլիկ տեղակալիչներով էնանտիոմերապես մաքուր (S) և (R)- α -ամինաթթուների օգտագործմամբ: Մշակված մեթոդը հաջողությամբ կարելի է կիրառել N-ֆորմիլմեթիոնիլ պեպտիդների կազմի մեջ այլ, ոչ սպիտակուցային ամինաթթուներ ներմուծելու համար, իսկ սինթեզված նոր պեպտիդները, կարող են մոտ ապագայում հաջողությամբ ապրանքայնացվել միջազգային շուկայում:

Սինթեզված ոչ սպիտակուցային ամինաթթուներ պարունակող պեպտիդների կենսաբանական հատկությունների հետազոտման արդյունքում որոշ նմանակների մոտ հայտնաբերվել են սերինային պրոտեազների արտահայտված արգելակիչ ակտիվություններ, որոնց հետագա կատարելագործումը կարող է բերել նոր հակավիրուսային դեղապատրաստուկների ստացմանը:

Պաշտպանության ներկայացվող դրույթները:

- Քեմոտակտիկ ազդեցությամբ օժտված դիպեպտիդների սինթեզի մշակված մեթոդներ,
- Ալիֆատիկ և հետերոցիկլիկ տեղակալիչներ պարունակող ոչ սպիտակուցային ամինաթթուներ պարունակող N-For- և BOC-պաշտպանված դի- և տրիպեպտիդների (ավելի քան 34 մուդ) սինթեզ:
- Տեղակալված 1,2,4-տրիազոլային օղակ պարունակող α -ալանինի մնացորդներից կազմված պեպտիդների ազդեցության հետազոտում տրիպսինի և պրոտեինազ K-ի ակտիվության վրա:
- Դրանց շարքում պոտենցիալ արգելակիչների բացահայտման նպատակով համակարգչային AutoGrid 4 և AutoDock 4 ծրագրերի կիրառմամբ նրանց փոխազդեցությունների մոդելավորում:

Աշխատանքի կապը գիտական ծրագրերի և թեմաների հետ: Աշխատանքն իրականացվել է Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի #2780 (2002-05թթ.), A-1247 (2004-08թթ.) և A-1677 (2008-11թթ.) դրամաշնորհների, ինչպես նաև Հայկենսատեխնոլոգիա ԳԱԿ-ի բազային գիտահետազոտական ծրագրերի շրջանակներում:

Հեղինակի անձնական ներդրումը: Հեղինակի անձնական ներդրումը ներառում է աշխատանքի հետ առնչվող գիտական գրականության վերլուծությունն ու ընդհանրացումը, հետազոտության հիմնական փորձարարական խնդիրների իրականացումն ու ամփոփումը, տպագրվող գիտական հոդվածների մախապատրաստումը և ատենախոսության կազմումը:

Աշխատանքի քննարկումը և տպագրությունները: Ատենախոսության նյութը շարադրված է 3 գիտական հոդվածների և 1 թեզիսի տեսքով: Աշխատանքի առանձին արդյունքները գեկուցվել են State-of the-Art Biotechnology in Armenia & ISTC contribution, Tsakhadzor, 2008, Հայկական քիմիական ընկերության առաջին գիտաժողով «Հայաստանի քիմիական գիտության արդի խնդիրները», 2008, գիտաժողովներին և «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի գիտական խորհրդի նիստերում:

Աշխատանքի իրականացման վայրը: Աշխատանքն իրականացվել է ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի պեպտիդների սինթեզի լաբորատորիայում:

Աշխատանքի ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը կազմված է նախաբանից և չորս գլուխներից, (գրական ակնարկ, խնդրի դրվածք և հետազոտման օբյեկտի ընտրություն, արդյունքների քննարկում, փորձնական մաս), եզրակացությունից և գրականության ցանկից: Աշխատանքը շարադրված է 134 էջի վրա, բերված են 26 սխեմա, 24 նկար և 3 աղյուսակ: Գրականության ցանկն ընդգրկում է 231 գիտական տպագիր հոդվածներ:

ԳԼՈՒԽ 1. ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ.

Նվիրված է գրականության ամփոփմանը և նկարագրված են սպիտակուցային և ոչ սպիտակուցային ամինաթթուներ պարունակող պեպտիդների կիրառման հնարավոր ոլորտները: Առանձին բաժին նվիրված է ոչ սպիտակուցային ամինաթթուների ստեխիոմետրիկ ասիմետրիկ սինթեզի նկարագրությանը: Ներկայացված են դասական, պինդ ֆազային և ասիմետրիկ պեպտիդային սինթեզի եղանակները: Մանրամասն նկարագրված են նաև ռացեմիզացիայի խնդիրները պեպտիդային սինթեզում:

ԳԼՈՒԽ 2. ԽՆԴՐԻ ԴՐՎԱԾՔԸ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՕԲՅԵԿՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ.

Հետազոտության հիմնական առարկա են հանդիսացել քենտակտիկ դի-պեպտիդների սինթեզը և նրանց կիրառումը ոչ սպիտակուցային ամինաթթուներից կազմված նոր դի- և տրիպեպտիդների ստացման ռեակցիաներում, ինչպես նաև սինթեզված պեպտիդների շարքում սերինային պրոտեազների նոր արդյունավետ արգելակիչների բացահայտումը:

ԳԼՈՒԽ 3. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ.

3.1. Քենտակտիկ ազդեցությամբ օժտված N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլ-դիպեպտիդների սինթեզը

Քենտակտիկ ազդեցությամբ N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլ պեպտիդների կենսաբանական հատկությունները բավականին ուսումնասիրված են, սակայն գրականության մեջ բացակայում են աշխատանքները նրանց ստացման մեթոդների վերաբերյալ:

Սույն աշխատանքում նշված պեպտիդների ստացման համար մշակված մեթոդը բաղկացած է հետևյալ փուլերից.



ա) N-ֆորմիլ-(S)-մեթիոնինի ստացում,

բ) N-ֆորմիլ-(S)-մեթիոնինի ակտիվացված էսթերի ստացում և նրա կոնդենսում հաջորդ ամինաթթվի հետ, առանց վերջինիս կարբօքսիլային խմբի պաշտպանման: Բավականին բարձր ելքերով իրականացվել է (S)-մեթիոնինի (1ա) և (R)-մեթիոնինի (1բ) N-ացիլումը 98%-ոց մրջնաթթի և կոնցենտրիկ բացախանիդրիդի օգտագործմամբ (3:1 հարաբերությամբ): (Մխենա 1):

3.2. Էնանտիոմերապես մաքուր ոչ սպիտակուցային ամինաթթուներ պարունակող N-ֆորմիլդի- և տրիպեպտիդների սինթեզը

3.2.1. N-ֆորմիլդի- և տրիպեպտիդների սինթեզը պլանինի ոչ սպիտակուցային նմանակների կիրառմամբ

Ոչ սպիտակուցային ամինաթթու պարունակող N-ֆորմիլդիպեպտիդների սինթեզը իրականացվել է նրանց սպիտակուցային նմանակների սինթեզին համանման: (Նկար 1):




Նկար 1: Տեղակալված 1,2,4-տրիազոլային և արոմատիկ օդակ պարունակող որոշ N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլդիպեպտիդների կառուցվածքը:

Սինթեզվել են N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլ-(S)-(N-բենզիլամինո)- α -ալանին (14), N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլ-(R)-(N-բենզիլամինո)- α -ալանին (15), N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլ-(S)- β -[4-ալիլ-3-պրոպիլ-5-թիօքս-1,2,4-տրիազոլ-1-իլ]- α -ալանին (16), N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլ-(S)- β -[4-ֆենիլ-3-պրոպիլ-5-թիօքս-1,2,4-տրիազոլ-1-իլ]- α -ալանին (17), N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլ-(S)- β -[4-ալիլ-3-(2'-քլորֆենիլ)-5-թիօքս-1,2,4-տրիազոլ-1-իլ]- α -ալանին (18), N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլ-(S)- β -[4-ալիլ-3-(2'-մեթօքսիֆենիլ)-5-թիօքս-1,2,4-տրիազոլ-1-իլ]- α -ալանին (19), N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլ-(S)- β -[4-ալիլ-3-բենզիլ-5-թիօքս-1,2,4-տրիազոլ-1-իլ]- α -ալանին (20), N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլ-(S)- β -[4-ալիլ-3-(ֆուրան-2-իլ)-5-թիօքս-1,2,4-տրիազոլ-1-իլ]- α -ալանին (21), N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլ-(S)- β -[4-ալիլ-3-(պիրիդին-3'-իլ)-5-թիօքս-1,2,4-տրիազոլ-1-իլ]- α -ալանիններ (22ա,բ) և N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլ-(S)- β -[4-պրոպիլ-3-բուրիլ-

5-թիօքսո-1,2,4-տրիազոլ-1-իլ- α -ալանին (**23**), դիպեպտիդներ որոնց կառուցվածքը հետազոտվել և հաստատվել է ՄՄՌ- սպեկտրոֆիտական եղանակով: Հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ տեղակալված ալանինի մնացորդի տրիազոլային օղակի 3-րդ դիրքում պիրիդին սեղակալիչի առկայության դեպքում տեղի է ունենում մեթիոնինի մնացորդի մասնակի ռացեմիզացում, վերջինիս ածխածնի ատոմի ինվերսիայի շնորհիվ, որը բերում է համապատասխանաբար N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլ-(S)- β -[4-ալիլ-3-(պիրիդին-3'-իլ)-5-թիօքսո-1,2,4-տրիազոլ-1-իլ]- α -ալանինի (**22a**) և N-ֆորմիլ-(R)-մեթիոնիլ-(S)- β -[4-ալիլ-3-(պիրիդին-3'-իլ)-5-թիօքսո-1,2,4-տրիազոլ-1-իլ]- α -ալանինի (**22բ**) դիաստերիոմեր խառնուրդի առաջացմանը: Այդ փաստը հաստատելու համար մեր կողմից իրականացվել է հանդիպակաց սինթեզ, որի ժամանակ որպես ելանյութ օգտագործվել է N-ֆորմիլ-(R)-մեթիոնինը: Մինթեզված դիպեպտիդների կառուցվածքի ՄՄՌ- սպեկտրոֆիտական հետազոտման ժամանակ պրոտոնների համապատասխանեցման համար բացի ^1H ՄՄՌ- սպեկտրոմետրից ստացվել է նաև 2D ՄՄՌ- սպեկտրոմերը - Heteronuclear Multiple Quantum Coherence (HMQC):


Այնուհետև տրիազոլային օղակ պարունակող ամինաթթուները կիրառվել են տրիպեպտիդների ստացման ռեակցիաներում: Դրա համար նույն սկզբունքով N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլզիցին (**9**) և N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլ-(S)-ալանին (**10**) դիպեպտիդներից ստացվել են համապատասխան N-օքսիտուկցինիմիդային ակտիվացված էսթերները (OSu) (**24**) և (**25**), որոնք այնուհետև հիմնա-ջրային լուծույթում կոնդենսվել են տարբեր էնանտիոմերապես մաքուր ոչ սպիտակուցային ամինաթթուների (ՈՍԱԹ) հետ, առաջացնելով N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլզիցին-ՈՍԱԹ և N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլ-(S)-ալանին-ՈՍԱԹ: (Մխենա 3):

Մխենա 3



Այս եղանակով սինթեզվել են N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլգլիցիլ պարունակող տրիպեպտիդներ՝ N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլգլիցիլ-(S)-β-[4-պրոպիլ-3-բութիլ-5-թիօքս-1,2,4-տրիազոլ-1-իլ]-α-ալանին (29), N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլգլիցիլ-(S)-β-[4-ալիլ-3-պրոպիլ-5-թիօքս-1,2,4-տրիազոլ-1-իլ]-α-ալանին (30), N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլգլիցիլ-(S)-β-[4-ֆենիլ-3-պրոպիլ-5-թիօքս-1,2,4-տրիազոլ-1-իլ]-α-ալանին (31) և N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլ-(S)-ալանիլ պարունակող տրիպեպտիդներ՝ N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլ-(S)-ալանիլ-(S)-β-[4-պրոպիլ-3-բութիլ-5-թիօքս-1,2,4-տրիազոլ-1-իլ]-α-ալանին (32), N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլ-(S)-ալանիլ-(S)-β-[4-ալիլ-3-պրոպիլ-5-թիօքս-1,2,4-տրիազոլ-1-իլ]-α-ալանին (33), N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլ-(S)-ալանիլ-(S)-β-[4-ֆենիլ-3-պրոպիլ-5-թիօքս-1,2,4-տրիազոլ-1-իլ]-α-ալանին (34):

Վերը նկարագրված եղանակով այս աշխատանքում հաջողվել է սինթեզել նաև N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլ-(S)-ֆենիլալանիլ-(S)-β-[4-պրոպիլ-3-բութիլ-5-թիօքս-1,2,4-տրիազոլ-1-իլ]-α-ալանին կարևոր պեպտիդը (35), որը պարունակում է բարձր քանակությամբ ազոտային օժտված N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլ-(S)-ֆենիլալանինի մնացորդ: (Նկար 2):




Նկար 2: *N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլ-(S)-ֆենիլալանիլ-(S)-ալանիլ-(S)-β-[4-պրոպիլ-3-բութիլ-5-թիօքս-1,2,4-տրիազոլ-1-իլ]-α-ալանինի կառուցվածքը:*

Համաձայն ¹H-ՄՄՆ սպեկտրադիտակն անալիզի տվյալների 35 տրիպեպտիդը ստացվում է մաքուր դիաստերեոմերի տեսքով:

3.2.2. Ալիֆատիկ α-ալիլգլիցին և β-հիդրօքսիլեյցին պարունակող N-ֆորմիլդի- և տրիպեպտիդների սինթեզը

Ստորև ներկայացված բոլոր ալիֆատիկ N-ֆորմիլդիպեպտիդները ստացվել են N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլ քանոտակտիկ դիպեպտիդների սինթեզի համար նախորդ գլխում բրված մեթոդով: Դրա համար որպես ոչ սպիտակուցային ամինաթթվային բաղադրիչ օգտագործվել են (S)- և (R)-α-ալիլգլիցինի և (2S,3R)- և (2R,3S)-β-հիդրօքսիլեյցինի օպտիկապես մաքուր իզոմերները, որոնք արդեն օժտված են տարբեր կենսաբանական ակտիվություններով: Այդ ամինաթթուների հիման վրա սինթեզված որոշ դիպեպտիդների կենսաբանական հատկությունների հետազոտման արդյունքում արձանագրվել են նկատելի ակտիվություններ: Սինթեզված պեպտիդներից յուրաքանչյուրի անջատման և մաքրման համար մշակվել են օպտիմալ պայմաններ, հաշվի առնելով պեպտիդի բաղադրության մեջ առկա ոչ սպիտակուցային ամինաթթուների առանձնահատկությունները: Բոլոր


սինթեզված նոր դի- և տրիպեպտիդների կառուցվածքը ուսումնասիրվել է ¹H-ՄՄՆ-սպեկտրադիտակահան անալիզի մեթոդով: (Նկար 3):



Նկար 3: *N*-ֆորմիլ-*(S)*-մեթիոնիլ- α -ալիլգլիցինի ¹H-ՄՄՆ- սպեկտրը: (Առանձնացված են ամիդային և ֆորմիլ խմբերի պրոտոնների ազդանշանները *(S,S)*- և *(S,R)*- իզոմերների համար):

Նկար 3-ում բերված է *N*-ֆորմիլ-*(S)*-մեթիոնիլ- α -ալիլգլիցին դիպեպտիդների ՄՄՆ- սպեկտրագրաման: Նկար 3-ից ակնհայտորեն երևում է *N*-ֆորմիլ-*(S)*-մեթիոնիլ- α -ալիլգլիցինի *(S,S)* (36) և *(S,R)* (37) դիաստրեոմերները տարբերվում են իրարից ալիլգլիցինի մնացորդի ամիդային պրոտոնի ազդանշանների քիմիական շեղման և սպին-սպինային փոխազդեցության հաստատունի արժեքների հաշվին:


ՄՄՆ- տվյալները վկայում են այն մասին, որ որոշ դեպքերում *N*-ֆորմիլ-*(S)*-մեթիոնիլ-*(2S,3R)*- β -հիդրօքսիլեյցին (38) և *N*-ֆորմիլ-*(S)*-մեթիոնիլ-*(2R,3S)*- β -հիդրօքսիլեյցին (39) դիպեպտիդների սինթեզի ռեակցիաներում նկատվում է մասնակի ռացեմիզացում: (Նկար 4):



Նկար 4: Սինթեզված *N*-ֆորմիլ-*(S)*-մեթիոնիլ- β -հիդրօքսիլեյցինի ստրեոիզոմերների կառուցվածքը:

N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլ-β-հիդրօքսիլէյցին [(S),(2S,3R)] և [(R),(2S,3R)] ստերեոիզոմերները առաանձնացվել են աշտարակային ադսորբցիոն քրոմատոգրաֆիայի եղանակով:

Այնուհետև նշված ոչ սպիտակուցային ամինաթթուների հիման վրա սինթեզվել են N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլզիլիցիլ-(2S,3R)-β-հիդրօքսիլէյցին (**40**), N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլզիլիցիլ-(S)-α-ալիլիզիլցին (**41**) և N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլզիլիցիլ-(R)- α-ալիլիզիլցին (**42**) տրիպեպտիդները: (Նկար 5):



Նկար 5: N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլզիլիցիլ-(2S,3R)-β-հիդրօքսիլէյցին և N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլզիլիցիլ-(S)- և (R)-α-ալիլիզիլցին տրիպեպտիդների կառուցվածքը:


Տրիպեպտիդների սինթեզի արդյունքում ուղեկցող դիաստերեոիզոմերի բացակայությունը վկայում է, որ ելային N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլզիլիցինի դիպեպտիդի ստացման փուլում մեթիոնինի քիրալային ածխածնի ատոմի ինվերսիա տեղի չի ունենում:

3.3. N-Տրեպտոքսիկարբոնիլ (BOC) դի- և տրիպեպտիդների սինթեզը

Առաջին փուլում հայտնի մեթոդով սինթեզվել է BOC-(S)-ալանին (**43**) պաշտպանված ամինաթթուն, որը այնուհետև ռեակցիայի մեջ է դրվել N-հիդրօքսիսուկցինիմիդի (HOSu) հետ, դիցիլոնիտրոբիկարբոնիլիմիդի (DCC) ներկայությամբ: Ստացվել է N-BOC-(S)-ալանինի N-օքսիսուկցինիմիդային ակտիվացված էսթեր (**44**), որը կախված հետագա ռեակցիայից կարող է օգտագործվել անմիջապես, կամ էլ նախապես բյուրեղացնելուց հետո:

Հաջորդ փուլում դիօքսանի միջավայրում 0.5N ջրային NaOH-ի ներկայությամբ իրականացվել է N-BOC-(S)-ալանինի ակտիվացված էսթերի ռեակցիան հաջորդ ազատ ամինաթթվի հետ: (Մխենա 4):

Մխենա 4




Արդյունքում սինթեզվել են BOC-(S)-ալանիլզին (49), BOC-(S)-ալանիլ-(S)-ալիլզին (50), BOC-(S)-ալանիլ-(R)-ալիլզին (51), BOC-(S)-ալանիլ-(S)-β-(N-իմիդազոլի)ալանին (52) և BOC-(S)-ալանիլ-(R)-β-(N-իմիդազոլի)ալանին (53) դիպեպտիդները:

Սինթեզված դիպեպտիդների կառուցվածքը ուսումնասիրվել է ¹H-ՄՄՈ-սպեկտրադիտական անալիզի մեթոդով: Պարզվել է, որ սինթեզված բոլոր դիպեպտիդների (49-53) մոտիվները պարունակում են միայն մեկ դիաստերեոմեր, ինչը վկայում է սինթեզի գործընթացում ռացեմիզացման բացակայության մասին:

Տրիպեպտիդների ստացման համար սինթեզված BOC-(S)-ալանիլզին (49) դիպեպտիդը նախ միջանկյալ ակտիվացվել է N-հիդրոքսիսուկցինիմիդային էսթերի տեսքով (54) և այնուհետև փոխազդեցության մեջ է դրվել ոչ սպիտակուցային ամինաթթուների հետ, առաջացնելով BOC-(S)-ալանիլզին-(S)-β-(N-իմիդազոլի)ալանին (55) և BOC-(S)-ալանիլզին-(R)-β-(N-իմիդազոլի) ալանին (56) տրիպեպտիդները: (Մխենա 5):

Մխենա 5



3.4. Պեպատիղների անջատումը և մաքրումը

Կոնդենսման ռեակցիայի արդյունքում ստացված պեպատիղների անջատման և մաքրման մեթոդների ընտրությունը կախված է ստացված մոլեկուլների բևեռվածության աստիճանից, բյուրեղացման ունակությունից և այլ հատկություններից: Սույն աշխատանքում մշակվել են սինթեզված վերջնանյութերի անջատման երեք եղանակներ:

1. Ռեակցիոն խառնուրդը չեզոքացվում է 5%-ոց ծծմբական թթվով (կամ 10%-ոց կիտրոնաթթվով) և ջուր/օրգանական լուծիչը վակուումի պայմաններում հեռացնելուց հետո, մնացորդը տաքացնելով լուծվում է օրգանական լուծիչում (էթիլացետատ կամ էթիլացետատ/մեթանոլ), այնուհետև ֆիլտրվում է անօրգանական խառնուրդներից: Ստացված էթիլացետատի լուծույթից սառը պայմաններում բյուրեղացվում է պեպատիղը, բյուրեղները անջատում են ֆիլտրմամբ և անհրաժեշտության դեպքում լրացուցիչ վերաբյուրեղացվում են էթիլացետատ/հեքսան խառնուրդից: Այս եղանակով սինթեզվել են **10, 13, 22ա,բ, 52, 53** դիպեպատիղները և **55, 56** տրիպեպատիղները:

2. Ռեակցիոն խառնուրդը խառնման պայմաններում չեզոքացվում է 10%-ոց կիտրոնաթթվով նախապես ավելացնելով էթիլացետատ, այնուհետև խառնուրդը տեղափոխվում է սառնարան: Հաջորդ օրը առաջացած պեպատիղի բյուրեղները ֆիլտրվում և լվացվում են էթիլացետատով: Այս մեթոդով անջատվել են **11** և **21** դիպեպատիղները:

3. Ռեակցիոն խառնուրդը խառնման պայմաններում չեզոքացվում է 10%-ոց կիտրոնաթթվով (նախապես ավելացնելով էթիլացետատ), օրգանական շերտը անջատվում է, իսկ անօրգանական շերտը աղարկվում, կրկին էքստրակտվում էթիլացետատով և միացված օրգանական շերտերը չորացվում են մագնեզիումի սուլֆատով: Չորացնելուց հետո լուծիչը հեռացվում է, իսկ պեպատիղը վերաբյուրեղացվում է էթիլացետատ/հեքսան լուծիչների խառնուրդից: Այս եղանակով անջատվել են **9, 12, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 23, 29, 30, 31, 32, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41,42, 50,51** պեպատիղները:

Անջատված պեպատիղները լրացուցիչ մաքրվել են վերաբյուրեղացմամբ, իսկ որոշ դեպքերում նաև՝ աշտարակային քրոմատոգրաֆիայի մեթոդով:

Պեպատիղների վերաբյուրեղացման համար օգտագործվել են (մեթանոլ, էթիլացետատ և հեքսան) լուծիչներից կազմված խառնուրդներ:

Վերջնանյութերի մաքրության աստիճանը ստուգվել է նաև ՆՇՀ անալիզի եղանակով:

Չափվել է նաև սինթեզված նոր դի- և տրի պեպատիղների տեսակարար օպտիկական պտույտի արժեքները: Աղուսյակ 1:

Աղուսյակ 1-ում բերված են սինթեզված պեպատիղների վերաբյուրեղացման պայմանները, R_F-ի և [α]_D²⁰-ի արժեքները:

Մինթեզված պեպտիդների վերաբյուրեղացման պայմանները, R_f -ի և $[\alpha]_d^{20}$ -ի արժեքները:

Համարանիշը	Լուծիչների համակարգ	ՆՇՔ		$[\alpha]_d^{20}$
		Լուծիչների համակարգ	R_f -ի արժեք	
2ա	CH ₃ COOC ₂ H ₅ / C ₆ H ₁₂	<i>p</i>	0.5	+7.5 ⁰ (c = 3.6; MeOH)
2բ	CH ₃ COOC ₂ H ₅	<i>p</i>	0.5	-7.5 ⁰ (c = 0.4; MeOH)
9	CH ₃ COOC ₂ H ₅ / C ₆ H ₁₂	<i>p</i>	0.35	+13,13 ⁰ (c = 0.66; MeOH).
10	CH ₃ COOC ₂ H ₅	<i>p</i>	0.4	-18,01 ⁰ (c = 0.5; MeOH)
11	CH ₃ COOC ₂ H ₅	<i>p</i>	0.55	+10,01 ⁰ (c = 0.55; MeOH)
12	CH ₃ COOC ₂ H ₅ / C ₆ H ₁₂	<i>p</i>	0.45	+18,33 ⁰ (c = 0.3; MeOH)
13	CH ₃ COOC ₂ H ₅ / C ₆ H ₁₂	<i>p</i>	0.43	-
14	-	<i>p</i>	0.3	+35,01 ⁰ (c = 0.3; MeOH)
15	-	<i>p</i>	0.3	-
16	CH ₃ COOC ₂ H ₅ / C ₆ H ₁₂	<i>p</i>	0.35	-44.74 ⁰ (c = 0.413; MeOH)
17	CH ₃ COOC ₂ H ₅ / C ₆ H ₁₂	<i>p</i>	0.4	-35.34 ⁰ (c = 0.78; MeOH)
18	CH ₃ COOC ₂ H ₅ / C ₆ H ₁₂	<i>p</i>	0.4	-39.73 ⁰ (c = 0.245; MeOH)
19	CH ₃ COOC ₂ H ₅ / C ₆ H ₁₂	<i>p</i>	0.45	-34.74 ⁰ (c = 0.609; MeOH)
20	CH ₃ COOC ₂ H ₅ / C ₆ H ₁₂	<i>p</i>	0.4	+133 ⁰ (c = 0.06; MeOH):
21	-	<i>p</i>	0.45	-25.098 ⁰ (c = 0.051; MeOH)
22ա, բ	CH ₃ COOC ₂ H ₅ / CH ₃ OH	<i>p</i>	0.35	-
23	CH ₃ COOC ₂ H ₅	<i>p</i>	0.4	-30.357 ⁰ (c = 0.28; MeOH).
36	CH ₃ COOC ₂ H ₅ / C ₆ H ₁₂	<i>p</i>	0.4	-3,15 ⁰ (c = 0.81; MeOH)
37	CH ₃ COOC ₂ H ₅ / C ₆ H ₁₂	<i>p</i>	0.4	-37.06 ⁰ (c = 0.85; MeOH)
38	-	<i>p</i>	0.35	-
39	-	<i>p</i>	0.35	-

Աղյուսակ 1-ի շարունակությունը

29	CH ₃ COOC ₂ H ₅	q	0.4	-23,75° (c = 0.4; MeOH)
30	CH ₃ COOC ₂ H ₅	q	0.4	-12,69° (c = 0.52; MeOH)
31	CH ₃ COOC ₂ H ₅ / CH ₃ OH	q	0.45	-6,6° (c = 0.5; MeOH):
40	-	q	0.4	-
41	CH ₃ COOC ₂ H ₅ /C ₆ H ₁₂	q	0.45	+20,759° (c = 0.26; MeOH)
42	CH ₃ COOC ₂ H ₅ /C ₆ H ₁₂	q	0.45	-32,91° (c = 0.82; MeOH)
32	CH ₃ COOC ₂ H ₅ / CH ₃ OH	q	0.5	-4,0° (c = 0.25; MeOH)
33	CH ₃ COOC ₂ H ₅ / CH ₃ OH	q	0.5	-36,25° (c = 0.66; MeOH)
34	CH ₃ COOC ₂ H ₅ / CH ₃ OH	q	0.5	-
35	CH ₃ COOC ₂ H ₅ / CH ₃ OH	q	0.4	-20,02° (c = 0.35; MeOH)
49	CH ₃ COOC ₂ H ₅ /C ₆ H ₁₂	w		-
50	CH ₃ COOC ₂ H ₅ /C ₆ H ₁₂	w	0.35	+6,732° (c = 0.85; MeOH)
51	CH ₃ COOC ₂ H ₅ /C ₆ H ₁₂	w	0.45	-36,429° (c = 0.81; MeOH)
52	CH ₃ COOC ₂ H ₅ / CH ₃ OH	p	0.45	+3,0159° (c = 0.69; MeOH)
53	CH ₃ COOC ₂ H ₅ / CH ₃ OH	p	0.3	-37,016° (c = 0.71; MeOH):
55	CH ₃ COOC ₂ H ₅ / CH ₃ OH	q	0.3	-
56	CH ₃ COOC ₂ H ₅ / CH ₃ OH	q	0.3	-

ա) CH₃COOC₂H₅:CHCl₃:CH₃OH (5:5:1); p) CH₃COOC₂H₅:CHCl₃:CH₃OH (3:3:1);

զ) CH₃COOC₂H₅:CHCl₃:CH₃OH (2:2:1):

Ինչպես երևում է աղյուսակից, BOC-դիպեպտիդների անջատման ժամանակ բուֆերային լուծույթում զերակշռում են համեմատաբար ցածր պոլյարությամբ (հիդրոֆոբ) լուծիչները՝ քլորոֆորմ և էթիլացետատ: Նրանց մասնաբաժինը N-ֆորմիլպեպտիդների դեպքում և երբևէրևում է, ի օգուտ հիդրոֆիլ լուծիչի (մեթանոլ): Նրբաշերտ քրոմատոգրաֆիայի տվյալները օգտագործվել են որպես ցուցանիշներ աղտորեցիոն քրոմատոգրաֆիայի եղանակով նյութերի հետագա մաքրման ժամանակ:

Ակտիվացված էսթերների եղանակով պեպտիդների սինթեզի ժամանակ մասնակի ռացեմիզացման երևույթ նկատվել է միայն երեք դեպքում՝ (*S,R*) և (*R,S*) հիդրօքսիլեյցիններ և (*S*)-β-[4-ալլիլ-3-(պիրիդին-3'-իլ)-5-թիօքս-1,2,4-տրիազոլ-1-իլ]-α-ալանին ոչ սպիտակուցային ամինաթթուներ պարունակող դիպեպտիդների սինթեզի գործընթացում:

Յույց է տրվել, որ աշտարակային քրոմատոգրաֆիայի եղանակով N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլ-(2S,3R)-հիդրօքսիլեյցինի սինթեզի խառնուրդից հնարավոր է անջատել առաջացած երկու դիաստերեոիզոմերները՝ (S),(2S,3R) և (R),(2S,3R), որոնց կառուցվածքը և երկրաչափական կոնֆիգուրացիան պարզաբանվել է ՄՄՌ-սպեկտրադիտակաճան եղանակով: Ռեակցիոն խառնուրդից անջատված նյութերի ՄՄՌ-սպեկտրադիտակաճան անալիզը բացահայտել է դիաստերեոմերների հետևյալ հարաբերությունը՝ [(S),(2S,3R)]/[(R),(2S,3R)]=12/88:

Աշտարակային քրոմատոգրաֆիայի մեթոդով հաջողվել է անջատել միևնույն (R),(2S,3R) (38բ) դիաստերեոմերը: Ենթադրվում է, որ մասնակի ռացեմիզացման է ենթարկվել մեթիոնին մնացորդի քիրալային կենտրոնը: Դրա մասին է վկայում N-ֆորմիլ-(S)-մեթիոնիլգլիցիլ-(2S,3R)-հիդրօքսիլեյցինի տրիպեպտիդի սինթեզի ժամանակ մասնակի ռացեմիզացման բացակայությունը:

Ռացեմիզացման երրորդ դեպքը նկատվել էր, N-ֆորմիլ-(S)-մեթիոնինի-սուլցինիմիդային էսթերի և (S)-β-[4-ալիլ-3-(պիրիդին-3'-իլ)-5-թիօբտ-1,2,4-տրիազոլ-1-իլ]-α-ալանինի կոնդենսման ռեակցիայի ժամանակ: Ինչպես երևում է, բոլոր երեք դեպքերում էլ համակարգում առկա են հիմնային բնույթի ամինաթթուներ, որոնք տեսականորեն ընդունակ են նպաստելու ռացեմիզացման պրոցեսին: Քանի որ որոշակի դժվարություններ են առաջացել **22ա և 22բ** դիաստերեոմեր դիպեպտիդների քրոմատոգրաֆացման ժամանակ, դրանց մոտ իզոմերման պրոցեսների վերջնական հաստատման համար իրականացվել է հանդիպակաց սինթեզ N-For-(R)-Met-ի կիրառմամբ և ՄՄՌ-սպեկտրադիտակաճան եղանակով ցույց է տրվել, որ ռեակցիաների արդյունքում ստացված միևնույն և մածոր դիաստերեոմերների հարաբերությունները ենթարկվում են հակադարձ փոփոխման:

3.5. Ոչ սպիտակուցային ամինաթթուներ պարունակող պեպտիդների ազդեցությունը սերինային պրոտեազների ակտիվության վրա

Սույն աշխատանքում հետազոտվել են մեր կողմից սինթեզված ոչ սպիտակուցային ամինաթթուներից կազմված պեպտիդների և նրանց ելանյութերի՝ ոչ սպիտակուցային ամինաթթուների ազդեցությունը սերինային պրոտեազների ակտիվության վրա: Հետազոտությունները իրականացվել են երկու ճանապարհով՝ համակարգչային ծրագրերի օգնությամբ (դոքիմեզ անալիզ) սպիտակուցի հետ լիզանոլի փոխազդեցության մոդելավորում և փորձարկվող միացությունների առկայությամբ: Ֆերմենտի ակտիվության որոշում:

